

ԱՍԽԷ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏԻ ՏԵԽՊՐՈՊ



Վ. Ա. ՊԻՍԵՄՍԿԱՅԱ

ԳՈՄԱՂԲԸ—
ԲԱՄԲԱԿԵՆՈՒ
ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹ

ВИАНОТЕНА
ИНСТИТУТ
ВОСТОЧНОВЕДЕН.
Академии Наук
СССР

631

7-64

Ազերներ, Գյուղատնտ. բաժին, Բազու, 1934.

34-11
62704
ԱՍԽԶ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՏԵԽՊՐՈՊ

631
4-64

Վ. Ա. ՊԻՍԵՄՍԿԱՅԱ

**ԳՈՄԱՂԲԸ—
ԲԱՄԲԱԿԵՆՈՒ
ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹ**

Թարգմ. 2-րդ հրատարակությունից



ИНСТИТУТ
ТЕХНОЛОГИИ
ОЛЕЙНЫХ И
ЖИРОВ
СССР

ԱԶԵՐՆԵՇՐ
Գյուղատնտ. բաժին
Բազու — 1934



59885-66

Թարգմ. խմբագրեց՝ Ս. Կ. Թարգմ. Հ. Սարգսյան
տեխ.-խմբ. Թառվանյան

Baş Mətbuat Mydirliğı Myvəkilliği № 1897 Sifariş № 268 Tiraz 1500.
İstehsalata verilmiş 9-III—34. Çapa verilmiş 15-IV—34. Çap listi 1/10
Kağız formatı 72×110. Azərneşri məbəəsində basıldı. Bakı Əli Bəjra-
mov kycəsi „26-lar adına“ „Kitab Sarajı“.

Բամբակենու բերքի բարձրացումը հանդիսանում է յուրաքանչյուր բամբակային սովխողի և կոլխողի մարտական խնդիրը յերկրորդ հնգամյակում:

Կառավարութան դրած խնդրի կատարման ուղիները մեկը հանդիսանում է բամբակի դաշտերի բերքատվության բարձրացումը:

Չոր չե, վոր Համկոմկուսի (ք) Անդրյերկրումի 1934 թ. միջոցառումների մասին վորոշման մեջ մատնաշված է, վոր անհրաժեշտ է բամբակային դաշտերի պարարտացում կատարել:

ա) Հանգային պարարտանյութերով 33,000 հեկտարի հափ (ԱՍԽՀ-ում 26,000 հեկտար, ՀՍԽՀ-ում 5000 հեկտ. և ՎՍԽՀ-ում 2000 հեկտար):

բ) Գումադային պարարտանյութերով—ամենաքիչը 11,000 հեկտար, նրանից ԱՍԽՀ-ում 10,000 և ՎՍԽՀ-ում 1000 հեկտար:

Տվյալ զրույցում կանգ չառնելով հանքային պարարտացման հարցերի վրա (վորովհետև դրա մասին խոսվում է առանձին), մատնանշենք սովխողների և կոլխողների ներքին միջոցները, վորոնք կարող են ոգտագործվել հողի բերքատվությունը բարձրացնելու գործում:

Նման միջոցներն է հանդիսանում: գլխավորապես, դոմադրային պարարտացումը:

Գումադըն ամենաբժեքավոր պարարտանյութերից մեկն է հանդիսանում բամբակենու համար:

Նրա արժեքավորությունը կայանում է նրանում, վոր նախ նա պարունակում է բամբակենու աճեցման համար բոլորն անհրաժեշտ սննդանյութերը, իսկ յերկրորդը, իր փառմով բարելավում է հերկի դրությունը, դարձնելով հողը ծանրից ավելի փխրուն, վորը լավ է յենթարկվում մշակման:

Ավադային հողերը դոմադրով պարարտացնելուց ավելի
մ իալորված (քիչ թափվող) և պտղաբեր են դառնում:

Բամբակաբուծության համար մեծ չարիք և հանգիստանում
այն, վոր ջրովի կուլտուրայի դեպքում հողը կեղևապատում
է, առաջացում է նոսրացնում և այլն:

Գոմաղբը բարելավելով հողի զրուծյունը, նրան գուղ-
ձավորում և փխրուծյուն տալով, հանգիստանում է ճիշտ
միջոց կեղևի դեմ պայքարելու համար:

Գոմաղբի՝ հողին լավ վերակ տալու այդ հատկութունը
շատ կարեւոր է աղիանալու դեմ պայքարելու համար—սխտե-
մատիկ կերպով գոմաղբ մտցնելը լավացնում է աղիացած
հողերը և նրանց բամբակ ցանելու համար ավելի պիտանի
յե դարձնում, յեթե, ինարկե հողի տակ ջրերը չափազանց
մոտ չեն հողի մակերեսին:

Մանդատու նյութերի պարունակության տեսակետից
Անդրկովկասի բամբակային ռայոնների հողերը բավականա-
չափ աղքատ են: Բամբակենու համար անհրաժեշտ նյութե-
րից՝ ազոտ, ֆոսֆոր, կալիոն, հողերում առանձնապես քիչ է
ազոտը, փոքր ինչ շատ է ֆոսֆորը և բավականաչափ շատ է
կալիոնը:

Բայց կան այնպիսի ռայոններ ել, ինչպես որինակ
Գյոդչայի, Գյուրդամիրի, Աղդաշի, ուր հողում չափազանց
քիչ է և ֆոսֆորը և ազոտը:

Ընդհանրապես, բամբակային ռայոնների հողերի զլխա-
վոր պահանջը կայանում է նրանց ազոտ և ֆոսֆոր մատա-
կարարելուն մեջ:

Գոմաղբում հենց պարունակվում են այդ նյութերը.
ազոտ միջին հաշվով 0,5 տոկոս և ֆոսֆոր 0,3 տոկոս:

Հետևապես, հողին գոմաղբ ավելացնելով, մենք զբաժնով
իսկ լրացնում ենք հողի մեջ յեղած ազոտի և ֆոսֆորի ան-
բավարար պաշարը, վորով և բարենպաստ պայմաններ ենք
ստեղծում բամբակենու աճեցման համար:

Գոմաղբը բաղկացած է կենդանիների կղկղանքից և մե-
ղից, խառնված փոռցի հետ:

Ազոտով առանձնապես հարուստ է մեղը, հենց նրա նը-
կատմամբ պետք է մեծ ուշադրությամբ վերաբերվել, հիշե-
լով, վոր ինչքան շատ մեղ է մնում պարարտացմանը հատ-
կացրած գոմաղբում, այնքան ավելի արժեքավոր գոմաղբ է

ստացվում, և ընդհակառակը, վորքան շատ մեղ է կորեղ
անողում—ծծվել է հողի մեջ, այնքան գոմաղբն ավելի վատ
է պարարտացման համար: Դրա համար ել չափազանց կարե-
վոր է իմանալ, թե ինչպես պահել գոմաղբը, վորպեսզի
նրա լավ հատկությունները ստանալ առանց սննդաբար
նյութերը կորցնելու:

Ամենից առաջ, գոմաղբ ստանալու համար պահանջվում
է փոռց: Մեծ մասամբ այդպիսին հանդիսանում է ծղոտը:
Բավարար քանակությամբ փոռցը կարևոր է կենդանիներին
մաքուր պահելու համար: Այսպես որինակ, հանձնարարվում
է ամեն որ յուրաքանչյուր ձիու տակ փոռ 2 կիլոգրամ և
կովի տակ 3 կիլոգրամ ծղոտ:

Կարևոր է, վորպեսզի փոռցը, կղկղանքը և մեղը լավ
խառնված լինեն գոմաղբում: Հաճախ գյուղացիների մոտ
ընդունված է գոմաղբը պահել անասունների տակ և դուրս
տանել տարեկան մի անգամ միայն (անասուններին պահել
«շերտերի վրա»): Նման յեղանակով պահելուց փոռց շատ է
պահանջվում և բացի դրանից, անասունները վատ պայման-
ներում են պահվում, փչացած ող են ծծում, կանգնում են
գոմաղբի վրա, փչացնում կճռակները և այլն:

Գոմաղբը պահպանելու մյուս յեղանակը կայանում է գո-
մաղբի ավելի հաճախ գուրս տանելուն մեջ, ցանկալի յե
ամեն որ: Ինչպես այն, նույնպես և մյուս դեպքերում գոմաղ-
բի հեղուկային մասերի կորուստը լինելու յե, յեթե միայն
ժարախի կամ գոմի հատակը հողից է: Կոյաջրի մեծ մասը,
վորը պարունակում է բամբակենու համար ամենահարկավոր
միջոց—ազոտ, ծծվում է հողի մեջ, այսինքն կորչում է
ընդմիջ: Դրա համար ել պետք է այնպիսի հատակ պատ-
րաստել (ցեմենտից, ասֆալտից կամ կավից), վորպեսզի
կոյաջուրը չծծվի նրա մեջ, իսկ նման հատակը մենատնտե-
սի ուժից վեր է, վորովհետև թանկ է նստում և հնարավոր
է միայն կոլխոզում ու սովխոզում:

Հետևապես գոմաղբի կոյաջուրն ամբողջովին պահել կա-
րելի յե միայն սովխոզում և կոլխոզում:

Անասունների կանգնելու տեղի հատակը պետք է թեթ-
ջինել, վորպեսզի կոյաջուրը կարողանա հոսել մի ափսոս, վոր-
տեղից տարվում, մտցրվում է հատուկ փակ ավազան, վորը

նույնպես ցեմենտով կամ կավով պատած է, ուր և պահ-
վում է:

Անասունների կանգնելու տեղն ամեն ուր մաքրելուց, յե-
թե գոմաղբը թափեն ուր վոր պատահի և ինչ կերպ պատա-
հի, ապա նա անձրևների տակ ընկնելուց կլվացվի, արևից
և քամուց կչորանա, բացի այդ, նրանում կարող է ֆուսսա-
կար բորբոս առաջանալ:

Այդ բոլորի հետևանքով, անհատուկ նյութերի կորուստը
չափազանց մեծ է լինելու: Դրա համար ել հարկավոր է հա-
տուկ տեղ կառուցել — գոմաղբի պահեստ, ուր կարելի լինի
գոմաղբը թափել պահելու համար:

Նրա պատրաստելը կայանում է հետևյալումը. — անա-
սունների կանգնելու տեղին մոտ փոս է փորվում (փոսի
չափը կախված է տնտեսության մեջ յեղած անասունների
քանակից) գլխի, ուղղանկյան, քառակուսու ձևով և այն:
Փոսը կողքերից լավ է շինել ալյուրե լայն, վորպեսզի նրան
կարելի լինի բարձի կողքերից: Փոսի խորությունը պատի
ուղղությունը 2 մետր: Փոսի տակը թեք է ընկնում, ծածկում,
ալյուրեթյուն է կավով, իսկ ամենից լավ է աղյուսներ կամ
քարեր շարել և հետո կավով սվաղել: Կոյալի ավելցուկը,
վորը հոսում է գոմաղբից, տարվում է գոմաղբի պահեստի
կողքին գտնվող ավազանը, վորի մեջ է հոսում նաև կոյա-
լուրը փարախից:

Այդ ավազանից կոյալիով ժամանակ առ ժամանակ պետք
է ջրել գոմաղբը, նախ, նրան համար, վորպեսզի նա չչորանա
և յերկրորդ, վորպեսզի կոյալուրը ծծվի գոմաղբի մեջ:

Գոմաղբը պահեստում պետք է բաշխվի հավասարաչափ
և տափառափվի վտանքով: Գոմաղբի պահեստի վրա պետք է
ծածկոց կառուցել:

Վերջին ժամանակներս արտասահմանում գոմաղբը փո-
քըր ինչ այլ կերպ են պատրաստում:

Դրա համար գոմաղբի պահեստը բաժանում են վանդակ-
ների գերաններով, վերջիններս փորվածքներ ունեն տախ-
տակներ մտցնելու համար: Գոմաղբի պահեստն աստիճանա-
բար լցվում է գոմաղբով ամեն մի վանդակն առանձին, ըստ
վորում գոմաղբը դարձնելուց հետո, տախտակները հան-
վում են:

Գոմաղբի դարձումը կատարվում է այսպես. նախ տակը
քրվում է կամ ծղոտ կամ մանր ցախ, 20-35 սանտիմետր
հաստությամբ, իսկ նրա վրա հավասարաչափ փխրուն
շերտով դարձում են գոմաղբը 80-100 սանտիմետր և այդ-
պես թողնում են միա 3-4 որ: Այդ որերի ընթացքում գո-
մաղբի շերտությունը բարձրանում է մինչև 60°C: Դրանից
հետո գոմաղբը վտանքով տափառափում են, հենց վոր
նստցնում են, նորից գոմաղբի շերտ են դարձում 80—100
սանտիմետր հաստությամբ և նորից թողնում են, հետո
վտանքով տափառափում են և այնպես շարունակ, այնքան,
մինչև վոր վանդակը 2 մետր բարձրությամբ չի լցվում:
Նման դրություն մեջ գոմաղբը պետք է միա 3-6 ամիս, վո-
րից հետո նա պատրաստ է, այդ յեղանակով պատրաստվե-
լը կոչվում է. — տաք մամլած:

Նման գոմաղբով անդարար նյութերը համարյա թե չեն
կորչում և գոմաղբի ազդեցությունը բույսերի վրա չափա-
զանց բարձր է լինում: Գոմաղբը պատրաստ է համարվում,
յերբ նա մուգ գույն է ստանում, նրա մեջ գտնող ծղոտը
համարյա թե նույն գույնի է և հեշտ կտրտվում է:

Գոմաղբ սալու ժամանակը

Ռայոնում այս կամ այն ընդունված ցանքասփռու-
թյունից գոմաղբը դուրս տանելու ժամկետը կտրող է
տարբեր լինել: Այսպես, յեթե դաշտը ազատվում է հացա-
բույսերը (ցորեն, կամ գարի) հավաքելուց հետո, ապա-
պետք է գոմաղբը մտցնել աշնանավարին, այսինքն՝ աշնանը:

Յեթե բամբակից հետո յե, ապա միայն յերբ դաշտն տ-
գատվում է բամբակենու ցողուններից, այն է ձմռան-
ակցին-կեսերին (հունվար, փետրվար) — պետք է անմիջապես
սկսել գոմաղբի դուրս տանելը:

Գոմաղբը պետք է աստիճանաբար դուրս տանել, հերկի
չափին համեմատ, վորովհետև հերկն անելուց շատ առաջ
դուրս տանելուց և թողնելով, վոր մեկ լերկու շաբաթվա
ընթացքում փոքր կուտակներով դաշտում ընկած միա, գո-
մաղբը կորցում է իր աննդարար նյութերն անձրևների ազ-
դեցությամբ տակ, վորոնք նրան լվանում են հյութերից, իսկ
արևն ու քամին նրան չորացնում են:

Դրա համար հանձնարարվում է աշխատանքը կատարել մաս-մաս. մեկ-յեթու դաշտի համար գոմաղը դուրս տանել, փռել աֆն վորքան հնարավոր է հավասարաչափ և հերկել 18-20 սանտիմետր խորությամբ, իսկ հետո անցնել հետևյալ հոգամասին և այսպես շարունակ:

Յեթե հնարավորություն կա, ապա ոգտակար է գոմաղը փոցխով դարսել աֆն ակոսի հատակին, վորով անցնելու յե դութանը: Առանձնապես դա կարևոր է ծղոտաշատ գոմաղ-բի դեպքում, յերբ ծղոտը կտարներով կցցվի, և յերկ-բորդ՝ լավ, խոր թաղելը նպաստում է սնունդն անմիջապես բամբակենու արմատներին տալուն:

Գոմաղը տալն ուշացնելը պետք է, վորովհետև բամբակի բերքն իջնում և, վորքան վոր նրա մտցնելու ժամանակը մոտ է ցանքսին:

Համաձայն Անդր. Բամ. Գիտ. Հետ. Ինստ. Կենտրոնական Կայանի (Ֆայնջայում) տվյալների, ուր տարբեր ժամկետներով գոմաղը մտցնելու փորձ է կատարվել, տեսնում ենք, վոր բամբակենու բերքի ավելացումը ավելի շատ աշնանային և ձմրան ժամկետներին աղբիւլց է լինում: Գարնան աղբիւլց նա ավելի պակաս է լինում:

Բամբակենու բերքն ըստ աղբիւլու ժամկետների

	Առանց պարար-տացման	Մտցրած գոմաղը		
		Աշնան ցելին	Ձմեռյ ձմեռային վաղին	Գարնանը Գարնան-նային վաղին
Բամբակենու բերքը ցենտներ, հեկտ.	16ցենտ.	19,5	19,0	17,0
Ավելացումը գոմաղ-բից ցենտ, հեկտ.	—	+3,5	+3,0	+1,0

Հետևապես ավելի լավ է գոմաղը մտցնել աշնանից և ձմրանը հիմնական հերկերի համար:

Գոմաղը մտցնելու նորման

Գոմաղի միջին նորման Անդրկովկասի բամբակային ռայոնների պայմաններում հանդիսանում է 300-400 ցենտներ մի հեկտարին:

Այդ քանակութամբ գոմաղը մտցնելուց բամբակենու բերքն ավելանում է, այսպես որինակ-

Գյանջայում (Անդր. ԲԳՀԻ Կենտրոնական Կայանի փորձերը)

	Առանց պարար-տացման	Ըստ գոմաղի	Ավելացումն գոմաղից ցենտներ հեկտ.
Մտցնելու 1-ին տարին	16 ցենտ.	19,5	+ 3,5
„ 2-րդ տարին	—	18,5	+ 2,5
„ 3-րդ տարին	15 ցենտ.	17,0	+ 2,0

Ընդամենը յերեք տարվա ընթացքում գոմաղի աղբե-ցությունից ունենք մի հեկտարին 8,0 ցենտներ ավելացում բամբակենու բերքին, այսինքն համարյա թե կոլխոզային սեկտորի մի ամբողջ հեկտարի բերքի չափ: Այստեղից պետք է հիշել, վոր գոմաղի աղբեցությունը բոլորովին չի սահ-մանափակվում մտցրված տարով, այլ տարածվում է մի շարք տարիների վրա (3-4 տարի):

Բամբակենու բերքատվության իսկական ճանապարհը— ազնայտ է:

Վերջենք ուրիշ որինակ. Խալգանը (Աղդաշի ռայոն) — Անդր. Բ. Գ. Հ. Ի. փորձակայանի փորձերը 1926 թվին

Առանց պարարտացման
15,4 ցենտներ

Աղբած
19,6 ցենտներ

4,2 ցենտներ կամ 27 տոկոս ավելացում մի հեկտարին
—խոշոր և և ուշադրութիւն և գրավում իրեն վրա:

Նախիջեվանում

(Անգլ. Ռ. Գ. Հ. Ի. փորձագաշտի արդյունքները 1926 թ.)

Առանց պարարտացման
12,0 ցենտ.

Աղբած
15,0 ցենտ.

Բամբակի հումքի 3 ցենտներ ավելանալը մի հեկտարին
նույնպես ցույց է տալիս գոմաղբի խիստ ազդեցութիւնն
այդ ռայոնում:

Մեր առաջ ունենալով յերկրորդ հնգամյակի խնդիրները,
փորոնք անցնում են բերքատութեան մաքսիմալ բարձ-
րացման լուրջագիտակ, արհամարել գոմաղբային պարար-
տացումը, վորեւիցե տեղ դուրս թափել կամ այլեւ—հան-
դիսանում և վորճագործութիւն, վնասարարութիւն:

Դրա համար յուրաքանչյուր սովխոզ և կոլխոզ պետք է
նախամարտիկ լինի այդ միջոցառման մեջ, հիշելով, վոր
գոմաղբը հեշտ և ճիշտ պատրաստել պահել իրեն մոտ
սովխոզում և կոլխոզում:

Բացի կուսակցութեան և կառավարութեան խնդիրները
բերքատութեան բարձրացման մասին ուղղակի կատա-
րելուց, կոլխոզն իր դաշտերի որինակով ցույց կտա մնացած
գյուղացիներին այդ մտքներուց, միաժամանակ և կոլեկտիվ
տնտեսութիւն վարելու ոգւտը:

Գոմաղբը պահիր խնայարար, առանձնապես ջանքով վե-
րաբերվիր գոմաղբի կոյաջրին: Լավ պահված գոմաղբը—հզոր
միջոց է դաշտերի լավացման և բամբակենու բերքը բարձ-
րացնելու համար:

Միանգամ կալարարտացնես, բերքի ավելացումը կապա-
հովես 3—4 տարով:

Սովխոզներ ու կոլխոզներ, որինակ հանդիսացե՞ք գոմ-
աղբի հետ խելացի, տնտեսորեն վարվելուն մեջ:



20 лш.

15346

330
300

34-11
Ca 704

27 МАЯ 1934

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ОБОЗНАЧЕНИЯ
Академии Наук
СССР

Техпроп НКЗ АССР

В. А. Писемская

Навоз — удобрение под хлопок •

Азернешр, Сельхозотдел, Баку, 1934.